

րիներու մէջ նոր շինութեանց վարձքն եւ պիտի բարձուր այս գումարին վրայ :

Այս տեսութեամբ տասն տարուան մէջ թէ պարտքն կը վճարուի, թէ եկամուտներու աղբիւրները կ'շատան և թէ վանուց ապագան բոլորովին կ'պահանջի, ուսումնարանի մէջ փոխանակ եւեռուն քառասուն ժառանգաւոր կրթելու հար- իւր կ'կրթուի, թանգարանի մէջ լայն շտեմած գրքերն հե- տըզհետէ իւրյա կընծայուի, տը- պարանք կ'ծաղկի, վանուց վար- կըն ու համարուք կ'բարձրա- նայ և այսպէս յառաջ երթա- լով ապագային մէջ վանքն կա- ռող կ'լինի աւելի մեծ ծառա- յութիւններ ընել մեր սիրելի ազգին :

Իսկ կարուածները ծախելու եղանակին գալով ի հարկէ դիւ- րին և գործադրելի միջոցներ կան, առ այժմ այսպիսի կասեմք րբ ինչիքն ընդհ. ժողովոյ մէջ վանորէից պատ. Խորհրդոյ կող- մէ ներկայանալէն և լուծում գտնելէ ետև՝ կ'յանձնուի կեդ- րոնական լիարջութեան, որու Ամեն. Նախագահն Հայոց վեհ. կաթողիկոսին հետ այս մասին բանակցութեան կ'մտնէ ամեն հանգամանքները բացատրելով, ապա վաճառման եղանակը կո- րչուի և վեհ. կաթողիկոսի հը- րամանու Ռուսաստանի կար- ուածոց վաճառման համար էջ. միաձնի Սինդիկէն շրջաբերական ներ կ'ըրկուին տեղական առաջ նորոց և Տաճկաստանի կար- ուածոց համար կեդր. վարչու- թեան կողմէ : Այն ժամանակ դիւրին կ'լինի հաւատարմագոր- ծակալներու ձեռք գրամները գումարել և մեր առաջարկած նպատակին ծառայեցնել :

Լի յուսով եմք որ ի սէր Ե- րուսողէմի Հայոց դարաւոր հաստատութեան, վանորէից պատ. Խորհրդոյ՝ վարչու- թեան միւս ճիւղերուն հետ նը- կատողութեան կառնու այս օգ- տակար առաջարկութիւնն և այս մասին մանրամասն տեղեկագիր մը պատրաստելով Ազգ. ժողո- վին ուշագրութեան կ'ներկայէ, որպէս զի պարտ ու պատշաճ որոշումն ու գործադրութիւնը ընդունի յօգուտ ազգին :

Մ. Վ. Բ.

Նիկոմիդիոսէն կ'ձանուցա- նել մեզ թէ փոխ-Առաջնորդ զեր. Ստեփան վարդապետ, որ վեջերս Նիկոմիդիոս դարձեր էր, այս անգամ կրկին Ատարա- զար մեկնեց է անդգ. փոխ- հիւպատոս Պ. Քրիստիանի հետ, որոյ պաշտօնն է Ատարազարի մէջ և շրջակայքը գործուած Զէրքէզներուն բանութեանց ու

կեդրամները վրայօք մանրամա- սքն տեղեկագիր մը շինելով Սըր Լէյարտի գրկել :

Ասով հանդերձ Ատարազար- րէն երէկ րշ. հեռագիր մ'եկաւ ի Պատրիարքարան, որով Չէր- քէզներու գործած հարստա- հարսութեանց զէմ չարաչար կը գանգատի և անմիջական ու սողող դարման կ'խնդրէ : յա- ւելցնելով որ թէպէտ Բ. Պրան կողմանէ շրջուած ի պահանջի պէյ անուն պաշտօնեայն եկած է, բայց միայն 66 օր մնալով և ժողովրդեան վիճակին վրայ հարեւանցի տեղեկութիւն մը ստանալով, առանց սեէ դար- ման մ'ընելու՝ մեկնեց է :

Այս հեռագիրը երէկ յա- տուկ թագրիւրով Ս. Պատրիարքը Բ. Պրան ուշագրութեանը մա- տայ :

Պէրլինի արքունի ճեմարա- նի անդամներէն Բրոքիտէօր Պ. Էսուա-Սախաս Հայաստանի և Ատրեստանի գլխաւոր տեղերն արցնելով թեան երթալով, ուսումն. նական հետազոտութիւններ ը- նելու և գիտնական տեղեկու- թիւններ հաւաքելու պաշտօ- նով Ս. Պատրիարքը այդ կող- մերուն Առաջնորդաց յանձնա- բար շրջաբերականներ գրեց որ տեղացի մեր ազգայնոց, վանօ- լէից, եկեղեցեաց և այլոց վրա- յօք ստուգ. տեղեկութիւններ հաղորդեն իրեն, տեղեկութիւն- ներ՝ որոց մէջ անշուշտ հան բը- նակող մերազնէից վիճակն ալ մեծ և կարեւոր տեղ մը պիտի բռնէ :

Վերջին համոզ եւրոպական թերթերը հեռագիր մը կ'հրա- տարակեն, որն որ կարնոյ կու- սակոյ և հրամանատար Տէրվիշ րաշային՝ Սըր Լէյարտի պա- հանջմանը վրայ պաշտօնեայն կ'ընելը ծանուցանելէն յետոյ, կ'յուշուր բոյ նախ թէ՛

«Հայաստանի վիճակը շատ ծանրակշիւ է, ուր բազմաթիւ գաւառաց մէջ մեծ յուզմանք կ'ախրէ :»

Հայաստանի գաւառներէն շատին մէջ տիրած այս յուզ- մանքն ու խրատմք, զորս հոս պահելու կամ ծածկելու մաս- նաւոր փոյթ մը կ'տարուի, կը թուի թէ իրօք կայ, զորս հան- դարտեցնելու համար է ան- շուշտ անդգ. կառավարութեան ալ Հայաստանի բարեկարգմանց համար ձեռք առած ազգու մի- ջոցներն, առանց սպասելու որ օտմ. գանձուն վիճակը բարե- քի՛ բարեկարգմանց սկսելու համար, ինչպէս կանխաւ յայ- աւարարի էր :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգ. վարչ. Տնտ. Խորհ. Գաղտնիքի եկեղեցւոյ թաղ- անտակին, Արամեան երկուսե- վորժարանի և աղբարաց Մաս- նածոյովին երկուսից Հայուե- ցոյցիւր՝ որ 1877 յուլիոսի րե- կրեկով՝ կ'յանցին ցվերջ գեկ. 1878 և Լ. յուլիոսի Ս. Առաջնա- կեկեղեցւոյ թաղ. անտակին և լուծմանց Հայուեցոյցը՝ որ 1877 գեկտեմբերէն սկսելով կ'յանցի

ցվերջ տարին 1879. բոլորին Տնտ. Խորհրդոյ ներկայաց- ուած և անոց յար և նման մէկ օրինակը յիշեալ թաղ. խոր- հարդոց յուղարկուելով՝ հրա- հանգ տրուած է որ եկեղեց- եաց թակը կ'ախեն ի տես թա- ղեցոց :

Հետեւ պէտ Տնտ. Խոր- հուրդն այսու Պաշտօնական Ծա- նուցմամբ հրաւեր կը կարգայ պատուարժան թաղեցոց, որ սոյն հաշուեցոյցներուն վրայ ու- է ըողոք կամ գիտողութիւնն. թէ ունին՝ թուականէս 21 օր- եայ պայմանաժամաւ փութան գրաւոր կերպով ներկայացնել Տնտ. Խորհրդոյ :

Սոյն պայմանաժամը լրանա- լէն ետև ուն է ըողոք կամ գի- տողութիւն անյուսի պիտի մնայ 25 օգոստ. 1879 ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

Այս ուր. օր Օրթագիւղի քարոզի Արմ. Յ. Աշտ վրդայ. Մայր եկեղեցւոյ Տ. Սուքիաս հայրը և Գուգիւնձուքի Տ. Կա- րապետ հայրը իսկիւսար Ս. Խոյ եկեղեցւոյ երթալով, ձեր- մակեանի հետ բամբասակ աղ- ջիկը դանձիակ սենեկի մը մէջ հարցախնուած ու բռնի ստու- րագրութիւն առած բլլալուն զէմ աղջկան ծնողքը երէկ ու- րիշ 50 թաղեցւոց հետ բողոք մը մատուցել է Ս. Պատրիարքին : ձերմակեան վարդապետն ալ այսօր Պատրիարքարան հրաւիր- ուած է :

ՀՆՈՒՍԱԳՐԱԼՈՒՐԻ

Լնտարա 8 սպտմ. Սըր Հէնրի Լէյարտ, իւր ի Սիրիա բրած ուղեւորութեանը միջոցին օտմ. երկրէն դուրս չել- նելուն համար, իւր տեղը գոր- ծակատար մը կարգելու պէտք չկայ : Իւր բացակայութեանը՝ դեպքանատան Չրք. քարաւոր Պ. Սմայթ պիտի ստանձնէ վա- րել գործերը. սակայն Պ. Մէ- լէտ, որ մօտերս Կ. Պոլիս պիտի գտնուի, հան քիչ մ'ատեն կե- նալու համար, յառնելիք մաս- նաւոր խնդիրներով պիտի զբա- ղի :

Սըր Հէնրի Լէյարտի ուղե- ւորութեան նպատակն է՝ փոքր Ասիոյ կացութիւնը անձամբ ի- մանալ :

Հեռագիր մը կ'ձանուցանէ թէ՛ Գուգուլի անգղիական դե- սպտութեան բոլոր անձինքն ալ սրք կ'րազկանային Սըր-Քոմիտե- եարի պետականէն, Պ Ճէնքիւն- սեն, սօքթօր Գէլիլէն, Համիլ- թիւն տեղակալէն և 67 պահակ զինուորներէ, սպաննուեր են Աֆղաններէն, յուսահատ գի- մաղրութեանէն մը ետքը :

Այս առաւօտ հասած

Ս. Բէթերպուրի 8.—Չարք երէկ Լիվաթիա հասաւ. Չորա- ւոր ձեռնարկներ եղած են կօր- չաքօք և Պիդմարք իշխանաց մէջ հաշտութիւն և տեսակցու- թիւն մը յառաջ բերելու հա- մար :

Լնտարա 8.—Գուգուլի դէպ- քերն ամեն կողմէ ստուգուած է թայմի կ'կարծէ թէ Անգղիա

անմիջապէս գործի սկսելու է յա- լաց պատճառ մը չկայ որ, կը- սէ, Աֆղանիստանը միացնէ ի- բնն :

Սթէնտրտ ալ այս գործոյն մէջ ուսու լրտեսներուն մասը նշմարել կ'կասկածի :

Թայմի նորէն կ'իշէ կօրչա- քօք իշխանին տեղ Եուվալօք կոմսին անցնելու գրոյցը :

ԳՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ 19.12	
Բումէլի	43.50
Թղթաղրամ	835.00
Պղինձ	505.00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Արեւ.-բումէլիի երոպ- յանձնածոյովոյ օտմ. Գոմիսէր- ներն Ասիոյ բաշա և Վսեմ. Ապ- րօ Ս. Լ. Գ. առջի գիշերը մայ- րաքողօքս վերադարձան Յանձ- նածոյովը ի հարկին հաս պիտի գումարի վերջը :

—Հայէպի նախկին փոխէր Մազհար բաշայ իւր մարդօց- մովը Սթէնտրտէն յաօր շո- գեանու նտեղով յառաջիկայ եշ- օր մայրաքողօքս կ'հասնին :

—Անցեալին թերթերը հրատարակեցին թէ Տէչէնի կոմսին թագաւոր իրանկրաց կա- յարանք հեռագրական գծով հաղորդակցութեան մէջ զբը- ուած էր Սպարապետի դրան աշտարակին և Բերայի կեդրո- նական հեռագրակայանին հետ : Լիանթ կըսէ թէ՛ ասի տրդարե- րարսքսմ մեք, իսկ հեռա- գիր հաղորդելու և հրդեհի զեկուցման նշան տալու գրու- թիւնը այնքան թերի ու պա- կասաւոր է՝ որ ասկէ ոպաս- ուած իրական օգուտը դեռ չը տեսնուի : Նախ Սպարապետու- թեան աշտարակի դէտք, ուստ տեղը կրակի նշան տուած չը- լալու համար, միշտ կ'սպասէ որ հրդեհին բոցը երկնայ ու անկէ հարը նշանը տայ : Նախ թան- կաղին ժամանակ մը կ'կորսուի այս կերպիւ կրկնորդ՝ ջրհան- կրաց կայարանն ալ 8-10 վայր- կեի կ'որուստ մը կըլլայ, ձիե- րն ու կառքերը կեցած ա- խառք քիչ մը հեռուն դանուած բլլալուն համար, վերջապէս հրդեհ մ'իշչպէս որ պէտք է նէ՛ լու մը բռնկելէն հաղիւ հաղ 15-20 վայրկեանէն ետքը ջրհաններն պատրաստ կրլու- մեկնելու, թող որ երբեմն ալ նշանակուած տեղը սխալ կը- լայ, դէտք չկրնալով որոշ նըշ- մարել :

Այս անտեղութիւններն, յա- պաղումն ու սխալումները չպի- տի պատահէն իմէ հոս ալ ընդունուէր այն դրութիւնը՝ զոր կ'գործածեն Եւրոպայի բո- լոր գլխաւոր քաղաքները, որ է հրդեհ պատահած վայրկեանին անմիջապէս իմաց տալ ջրանկը- րաց ծառայութեան կեդրոնա- կան պահականոցը, երկարակա- ղօց տուիներու միջոցաւ : Գրե- թէ բոլոր փոշոցներու և արջ

քանի պաշտօնարանաց մէջ մէկ
մէկ կայ այս գոց տուփերէն,
որք ինչպէս ըսինք՝ ամենքն ալ
կեղծական ջրհանակայանին
հաղորդակցութեան մէջ են հե-
ռադրագծի միջոցաւ:

Այս գոց տուփերուն բա-
նալիներն ալ զմեռալ պահա-
րանի մը մէջ դրուած, տեղ մը
կ'պահուին, և այդ տեղերն ալ
ցոյց կ'տրուի դրնապաններուն,
պահանջներուն կամ փոփոցի
հրատարակի մանր մանր փերե-
զակներուն, այնպէս որ հրդեհ
մը պատահածին պէս՝ այս մար-
դոց մին կ'վազէ իսկոյն պահ-
նած տեղէն կ'առնէ՝ բանալի մը,
կ'բանոյ տուփը և կ'ծակը կու-
խելով հնչեցնել կ'տայ երկար-
բական զանգակը՝ որ կեցած է
նոյն տուփին հետ հաղորդակ-
ցող գծին մին ծայրը՝ ջրհա-
նակայանին մէջ, Այս կերպիւ
ջրհանաց ծառայութեան գրե-
խաւորք անմիջապէս կ'մտնայ
հրդեհին որ թողին և որ փո-
փոցին մէջ ծագիրը, առանց ա-
նանկ բարձր աշտարակաց պէտք
կենայու:

— Գաղութի մէջ անգղ. դեւ-
պանին և իր հետի մտղոց ու
զինուորաց սպանման լուրք խիստ
տխուր մտաւորութիւն մ'բրած
է նաև մայրաքաղաքիս հասո-
րակութեան վրայ:

Անգղ. վերջին թերթերն կը
նկարագրեն սրդէն Գաղութի
մէջ նոր դեհուան Սթր Ռիէր Բա-
վաների ինչպէս ընդունելու
թիւններն, անանկ որ այսպիսի

աղետալի պատահականութիւն
մը բնաւ մտքէ իսկ չէր անց-
նէր, երբ յանկարծ հեռագիրը
այն փոթարեք գոյժը կ'հաղոր-
դէր թէ ամայս 22/3 սպա. դշ-
որ աֆղան զօրազունը մ'ապրե-
տածիւրով, քաղքին ժողովրդ-
դեանը հետ կ'միանայ, և ամ-
բարեք կերթայ անգղ. դեհուա-
նատան վրայ յարձակելով կը
պաշարէ զայն և ներս մտնելով
կ'պաննէ ու կ'ջարդէ Սթր Բա-
վաներին և բարբ ևր մարդի-
կը խուզութիւնը խաղաղեցնե-
լու համար հոն վաղող պաշտօ-
նատարաց յուսահատ մէկ գի-
մադրութեան յետոյ:

Հաճախ տուած հեռագիրն
երէկ հրատարակեցինք, իսկ
բաւթըրի հեռագիրը քիչ մ'ա-
ւելի մանրամասնութիւններ ալ
կ'տայ, Յարձակումն զշ. առա-
ւօտ սկսելով մինչև երեկոյ տե-
ւեր է, կերի թէ է միւր Ես-
գուց խան ինքն ալ իր նստած
ամրոցին մէջ պաշարուեր է ա-
պրտամարտիչն, որ չէ կրցեր
օգնութեան հասնել դեհուա-
նատան:

Գեոպանտան մարդոցը և
պահապան զինուորաց սպանման
հեռագիրը նոյն ինքն Հնդկաս-
տանի փոխարքայ Լորտ Լիթ-
թըն հաղորդեր է ի Լնտրա, և
հրաման բերէ միանգամայն
Բոպերթիս զօրապետին՝ որ ան
միջապէս Գաղութի վրայ քալէ
զայն գրուելու, ամեն տեսակ
զօրաց բազմութեամբ մը, կը
թուի թէ Եսգուց խան ինքն

ալ խնդրեր է անգղ. բանակին
միջամտութիւնը:

Կըսուի թէ ապտամբութիւ-
նը մինչև այս շր. երեկոյ Գա-
պուէն դուրս չէ ելեր, զի ան-
կէ դուրս ամեն ուրեք մինչև
շր. երեկոյ հանդարտ է եղեր
Աֆղանիստան, գոնէ Հնդկաս-
տանի սահմանագլխէն մինչև
Շու թար-կարտանի կիրճը:

— Ֆիլիպպէն երէկ հոս հաս-
նող հեռագիր մը կըսէ թէ,
Անգղ. բնդհ. հիւպատոս Պ. թո-
մաս Միչէլ, Այլքո բաշայի հետ
ունեցած մէկ տեսակցութեանը
մէջ, յայտնեցէ իրեն թէ Ա-
րեւել-Բուսթիլի տաճկաց անտա-
նէի վիճակը զիրենք յուսա-
հատութեան տարած է. Պ. Մի-
չէլ իւր այս ըսածին ի հաստա-
տութիւն՝ յառաջ բերեր է թա-
թար Բաղարճըրի մէջ և այլուր
բրած քննութեանց անդէկազի-
րը, պահանջեր է Այլքո բաշա-
յէն որ թաթար Բաղարճըրի
քաղաքայեաք պաշտօնէ ձգ-
ի, զոր ինքք այդ պաշտօնին
զինջ տուեր էր, բայց ի զո՛ւր,
տաճկներն պաշտպանելու հա-
մար, հաւաստեր է թէ Տաճ-
կաց այժմու պահանջած բայր
կայտածական սեպհակառու-
թիւններն Պոլիսիաց ձեռք
կրակի տրուած են, անպէս որ
բազմաթիւ գիւղեր կան կամ
մտտամբ և կամ բոլորովն ան-
հետացած:

Տաճկներն ամեն օր անգղ.
հիւպատոսարանը կ'փոխչին կա-
պտտանին, նախընթաց օրն

ալ 80 հոգի եկեր են անգղ.
հիւպատոսութեան պաշտպանութիւնը
խնդրելու:

Սոյն պիտոցութեանց վրայ
Այլքո բաշա հեռագրեր է ի
թաթար Բաղարճըր՝ որպէս զի
խիստ քննութիւն մ'ըլլայ:

(7. — Տարակոյս չկայ թէ
օսմ. կառավարութիւնը կամ ին-
քը խորհուրդ տուած է Արեւել-
Բուսթիլի Տաճկաց՝ որ զլուխ-
նին նեղը մնալուն պէս՝ անգղ.
հիւպատոսին դիմեն և սորա
պաշտպանութիւնը հայցեն. կամ
այն է թէ այդ Տաճկներն ի-
րենք իրենց մտածեր են այդ
միջոցն ձեռք առնուլ և Արեւ-
ելքն ալ գոհ արքա պիտի նայի
Բուսթիլի տաճկաց այս բրածին:
Բ. Դրան այս կերպիւ՝ տե-
ղական իշխանութեան կողմէն
հարստահարեալ ժողովրդեան
մը՝ առ անգղ. կամ ունէ օտար
տէրութեան մը հիւպատոսն կա-
րենալ դիմելու սկզբունքն ան-
գամ մը՝ և նոյն իսկ իւր կրօ-
նակից տաճիկ ժողովրդին հա-
մար՝ ճանչցած և ընդունած ըլ-
լալով, հետեւօրոր ոչ բան բ-
սելու և ոչ ալ սրանեղելու ի-
րաւունք պիտի ունենայ, եթէ
կարնոյ, Մշտ. վանայ, Պոլիս-
գլխի, Սեբաստիայ, Խարբերդի
և այլ տեղեաց հարստահարեալ
ժողովուրդներն այրեր զլուխին
նեղը մնայ՝ անմիջապէս անգղ.
կամ ունէ օտար տէրութեան մը
հիւպատոսին կամ ներկայացուց-
չին դիմելու ըլլան:

— Պատիւս վկայ. . . Բայց մինչև անտան՝ իմբա-
ւականաւոր և ժուժկալ սոփորութիւններն կ'ներեն ինչ
պատուաւոր շարժարութեան մը մէջ ապրելու:

— Բայց ինչ եղեր են դու, հարցուց ժողէրէն,
որոյ իր զուարթութիւնը վերստին գտնելը յայտնի ե-
ղաւ՝ ապահովուելով թէ Բոպի իրմէն ստակ փոխ առ-
նելու համար չէր եկած:

— Է՛յ, ըսաւ Բոպի, վիպական կեանք մ'անցուցի,
զուակաւ Բաղդէ կամ հարստութիւնը այնքան մօտ տե-
սայ ինձ, ինչքան որ հեռի կ'գտնուի սա գեր տիկինը,
որոյ նորմանտիսկան բանը ձայնը միաքս կ'ձգէ Ալան-
սօնի մէջ օր մը վար ինտու . . .

— Մէկ տեղի վերաւորուեցաւ . . .

— Անձնապատուութիւնս վերաւորուեցաւ . . . մէկ
մ'ալ ալ կողի տչքս — Փիլիպպոս Մակեդոնացւոյն
պէս — կոշտ մէկու մը նետած խնձորի մը կտորէն . . .

— Ինչո՞ւ կ'նետէ կոր . . .

— Անոր համար որ մտախնի Ֆետրին մէջ հոյապանծ
Իրթոյի զերը կ'խաղայի:

— Հա՛, ըսաւ ժողէրէն խնդալով մը, — հիմայ հաս-
կըցայ, ինչնալ կայ՝ ինչնալ ալ կայ . . .

— Անչո՞ւ շտ, կրկնեց Բոպի պաղարկելութեամբ մը,
— Ես ալ իրեն հեղինակ ինկայ . . . Բայց մենք հա-
րճաութեան վրայ կ'ստեղծեմ կոր . . . Կ'հաւատան
երբ որ ըսեմ թէ՛ Տիւ չեանելի այդ անխնայ զաղափարն
էր որ զիս բողբոլին մայրեցոյց:

— Ո՞ր դաղափարն է այդ:

— Կ'նե՛րք, զուակալ, կ'նե՛րք . . . ու զեցի անոնցմէ
սանդուխ մը շինել ինձի . . . բայց ոտքս սահեցաւ . . .
Այսքանն ըսեմ որ, իմ ունեցածին պէս թերթաբար-
տով մը, յորում տան հազար ակնկալութիւնը կան, —
առանց հաշուելու երկու ողբերգութիւններ, — ստիպ-

իրեն հետ միտեղ, օթեակին մէջ, նստած էր իւր
այրը, երեսուն կամ երեսուն և հինգ տարեկան մարդ
մը, ծանրախոհ և մտածկոտ դէմքով, և ուրիշ երկու
երեք ալ այցելուք:

Կտտած և Սենթ, թատերաբեմին վրայ օճակողմ
եան օթեկաց կորզը՝ զրեթէ նոյն դժին վրայ գտնուե-
լով, չէին կրնար տեսնել թէ ինչ անց կանցնէր հոգ: Ի-
րենց ետեք կ'գտնուէր վերնատան պատշգամին մտից
դուռը, իրովնաւ պատշգամին առաջակողման սրահա-
վայրը, որ նստած էին իրենք, լեցուն էր, զորմառ-
բուհի աղիկը թափուր Թոթակներն այն դատարկ տե-
ղը զրեք էր՝ որ իրր անցնելու ճանրայ կ'գործածուի:
Կ'տեսնուէին հոն արք և մինչև իսկ երկու կամ երեք
կանայք, որք աղած ձկանց պէս իրարու վրայ դիզ-
ւած կ'կենային:

Կտտածին նստած խնձորից նստարանին անմիջա-
պէս քովը գտնուած Թոթակին վրայ կ'նստէր ծանրա-
լուր դէմքով խորտեալ պարսն մը, սակեղծական ակնոց
մը աչքը, որ նստելէն առաջ բարե մը փոխառակներ էր
Տիւրանէն փաստարանին հետ, Սրահալայրը նստող-
ներուն մէջ մնացածներն՝ մասնաւոր յիշատակութեան
արժանի այնքան կարեւոր և հետաքրքրական հանգա-
մանք մը չէին ընծայեր:

Մինակ, պատշգամի սրահին ամենէն ետեք կ'իտա-
բոլոր շրջանակին վրայ, քիչ մը բարձրիկէ կ, երկու գե-
ղազէ մ'մանչ կային, որք իրենց կիրակեօրեայ կամ պա-
հեստի զգեստներն հագած դորձաւոր տղայք ըլլալու
երկոյմ մը կընծայէին, քովերին ալ մէկ մէկ կրակու-
րոց ընկերուհի ունենալով, Ասոնց չորսն ալ եռամսեանից
զիտակ մը փոփոխակի իրարու առաջով, կատթօնը կ'ըն-
տէին կարգաւ:

— Տրակո՛ն, ըսաւ ստոյգմէ մին՝ Թեկոցը դ'ընելով:

ԱՁԻ

Օտմանեան Թատրոնին վարչութիւնը մտադիր լինելով իւր գործառնութեանը սահմանը բնորոշելու և աւելի կատարելութիւն տալ իւր ներկայացմանը, կհրատարակեն ամեն անոնք որք յօժարութիւն և յարմարութիւն ունին դերասանական արուեստին, գալ ի յիշեալ թատրոնն ի կէտիկրաշա ներկայանալ առ ստորագրեալն որ զոհացուցիչ ամսական մը կ'իտատանայ իրենց, Ս. Թաշեան 23 Օգոստ. 79 կէտիկ-Փայտ

ՅԻՆԵԿԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Թիւ 362 Ուղղուն-Չարչը

Այս գրատուն մէջ սկսուած է գրի և գծագրութեան վերաբերեալ տիրաւորութիւնը զիջելու չստացողներու Գրքերու չստացողներու Գրքերու կրօնային փութակներու և անոնց փութակներու անոնք որք յօժարութիւն և յարմարութիւն ունին դերասանական արուեստին, գալ ի յիշեալ թատրոնն ի կէտիկրաշա ներկայանալ առ ստորագրեալն որ զոհացուցիչ ամսական մը կ'իտատանայ իրենց, Ս. Թաշեան 23 Օգոստ. 79 կէտիկ-Փայտ

ԱՌԱՋՆՈՐԴ

ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՆՍԻՄԵՆԻՆ ԱԵՋՈՒՆ

Աշխատասիրեաց

Ս. Պարսեան Հիւսիսային

1879

Այս գրատուն մէջ սկսուած է գրի և գծագրութեան վերաբերեալ տիրաւորութիւնը զիջելու չստացողներու Գրքերու չստացողներու Գրքերու կրօնային փութակներու և անոնց փութակներու անոնք որք յօժարութիւն և յարմարութիւն ունին դերասանական արուեստին, գալ ի յիշեալ թատրոնն ի կէտիկրաշա ներկայանալ առ ստորագրեալն որ զոհացուցիչ ամսական մը կ'իտատանայ իրենց, Ս. Թաշեան 23 Օգոստ. 79 կէտիկ-Փայտ

Մասն Ա. Քերականական կանոնները Մասն Բ. Զրուցատրութիւնը Մասն Գ. Անդրերկրէն յատուկ տեղերը Մասն Դ. Համառոտ նամակները Մասն Ե. Համառոտ խոսքերը Մասն Զ. Համառոտ բարբառները Անդրերկրէն ի Հայերէն

Արամեան տպարանէն ի յոյս բնօրինակով և անդրական կազմով գեղեցիկ կերպիւ պատրաստուած կը ծախուի ամեն գրապահուստաց խանութները ի զին երկու Փրանքս

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ի ՊԵՏՍ ՂՂՈՅԱԾ

Յօրինեաց

Ե. Մ. Սիւրբեան

Ահաւաստիկ առաջին դասագիրք մը ընթացանութեան, որ տալոյց հասկացողութեան յարմար բարոյացից և զբօսիչ իրութիւն պարունակելով զատ, ջրանի շարժարտագիտութեան պատկերներով ճոխացեալ է։ Սոյն գրքից 113 էրեսէ բաղկացեալ, մաքուր կերպով տպագրեալ և կազմեալ ըլլալով, կ'ընտրուի ինչն ճամբի Ձեռնարկներ ճատեւսի թիւ 2 և Ղ. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրապահուստաց քով։ Կին 2 ու կէս զրոյ, արծաթ

ՓԱՆՍՍԷ

Կրօնած ջարդի դեղը բուրբոյն բուսեղէններէ բաղադրուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գործածուի ու բուժանութիւն ցարկ ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ։ Ինչպէս որ վարը յիշուած է։

Ամեն տեսակ քրօնի, Ըստմանքսի, մէջքի կամ անդրերկրու ցարկ ու նաև Թանչք, Քոչքու և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հեռեւեալ կերպով։ Այս գաւաթը շուրթ մէջ, զիւր տպորթի մը զրգալէն աւելի շաքար, վրան լեցուցի անուշի զրգալ մը փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ։

Անորդի հիւանդութեանց, և Ուռնցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշի զրգալ այն բաղադրութեան խմէ։ Յօշոցարի, Բիւմաթիզմի, Ուռն ցարի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կանակի ցարկու համար դուրսէն փանասէ քսելով աղէկ մը շփելու է։ Այսպիսի ցարի համար քիչ մը բամպակ փանասէի մէջ թաթխելով ցաւած սկուային վրայ դնելու է։

Ամեն ատեն երբոր ցարի մը համար դուրսէն փանասէ քսել հարկ կըլլայ, և թէ քիչ մը ալ խմուի աւելի շուտ բժշկութիւն կըլլայ։

Մարմնայ սոյնուած կամ անուշի ցարի լուծելու համար վտանգը պատահածին ալէս փանասէն վրան աղէկ մը լեցնելու է։ Գտնակով և լին կտրուած վերքերը բժշկելու համար՝ արեւը շարժած շուտով մը վերքը կապելու և կապին վրայէն փանասէ լեցնելու է մինչև որ բաւ մը թրջի փանասէն նաև արեւան շրջանը կարագացնէ ու բոլոր բնութիւնը կը զորացնէ։

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարու էն զրիւ աւելորդ կը համարուի, որովհետեւ զայն ժիշտ կը գովին, ուզողը կրնայ անձամբ փորձել։ Գրին ամսան է ու թախտի Մշակուած և Ընկերաց Ս. մերկեան մահաառատունը օր ի Ղ. Ս. Սիւրբեան կ'Պարսեան

Հարսութիւն ԲՇ. 27 Օգոստ.

ԲՆԻՇ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	12.18
Յած գին	12.16
Բարձր գին	12.17
Գոց	12.16
Թղթագրում բաց	317.20
Գոց	810.00
Բարձր	835.00
Ժամը 11	815.00
Պիւ. 63ի	Ֆր. 000.00
Պիւ. 65ի	Ֆր. 069.00
Պիւ. 69ի	Ֆր. 066.00
Պիւ. 73ի	Ֆր. 062.00
Գանձատուն	21.25
Սուրէթէ Ժէնէրալ	4.06
Սուրէթէ Օթօման	3.10
Պանք տը Բօնսթ.	5.30
Քրէտի Ժէնէրալ	4.02
Թրամիէյ	3.75
Բուս. կրկնաթուղի	44.25
ԲՆԻՍԻՍ ԴՐՈՍՈՑ	
(Ու. 100 ար. 1 ար.)	
Անգլ. արկ	109.22
Գաղ. արկ	87.42
Բօլ	89.39
Քրէտից	81.10
Հինգից	19.30
Մէթալիք	18.00
Ճերմակ մէկիւ	06.19
Գրին	805.00

— գրու կ'ընեմ որ ան է։
Տրակօն հեղեարար վեր վերցոց ուտերն, և իւր ընկերոջը Բօարէի քովն մատի փոքրիկ հարուած մը տուաւ, ի մեծ հաճոյս օրիորդաց։
— Ուայց մատիկի հարուածը պատասխան չէ, կըրկնեց Բօարէ, ես գրու կ'ընեմ որ աս նայն ինքն Բայօն է։
— Ո՛չ, Բայօ աւելի մեծ է, ըսաւ Տրակօն, — Բայօ աւելի նիհար է. . . և ետքը՝ սա Բայօնէն աղէկ մէկն է։
— Հոգ չէ, ես գրու կ'ընեմ որ Բայօն է օա. . .
— Բարի գործաւոր մը, կրկնեց Տրակօն՝ որ փիլիսոփայ մն էր, չէր թար առջևի կտրգի ինն ֆրանքնոց օթեակները նստիլ իւր մէկ ծանօթուհւոյն հետ, որ տասն և ութն ֆրանք կ'ընէ, այդպիսի մաքուր զգեստով և մետաքսեայ շրջագոյնով։
— Ես գրու կ'ընեմ, ըսի. . .
— Ինչ աւանակ է եղիւր սա Բօառէն ալ, գոչիցին քծնուհիներն համոզեալ, — այդ պարուն և իւր տիկինը ինչպէս որ պէտք է՝ շէնք-շնորհք մարդիկ են։
— Թո՛ղ ըլլան. . . ես գրու կ'ընեմ, ըսաւ երրորդ անգամ Բօարէ, — որ սա Բայօն է։
Միջարարը կ'երկարէր, ֆրանսիներն կ'արձարանային, այնպէս որ իւրաքանչիւր ուրուք առածինն խօսակցութեան ամբողջ խօսքերն որոշակի կ'յստէին։
Կասթօն և Սէնթ, որք ցած ձայնիւ կ'խօսակցէին, ինչ որ կ'խօսուէր իրենց շուրջը՝ առանց ուշադիր ըլլալու՝ կ'ընէին։
— Տեսէք սա Բօարիզի առիւծները, կ'ըսէր տիկին մը՝ որ գեւ Նոր հասեր էր ստորին Նորմանտիայէն, մասնաւորապէս Գեյնսի-Շարիթօյի խումբը ցոյց տալով, — ինչ ուղ ազիզ են. . .
— Հո՛ւ, մայրիկ, կ'պատասխանէր իւր աղջիկը, —

ինչ ուղ նշանաւոր կերպարանք ունին. . . Անանկ չէ՛, հայրիկ։
Իո՛հ սա կայ որ՝ հայրիկը աւելի կովէ կ'հասկնար քան թէ առիւծէ։
— Ստոյգը սա է թէ, ըսաւ իւր գաւառին յառուկ անգղական ձայնով մը, շէնքով շնորհքով բաժն են վերջապէս։
Աթուակներու խիտ կարգերուն մէջ, որք ետեի կողմը կ'կենային, շարժում մ'ենելով, երկտասարդ մը, որ շքեղատեսիլ բանկոն մը հագած էր, վրան ալ ոտակերպակերտ շրթայ մը ձգած, եկաւ սակի ակնոցով պարանին քով նստելու։
Բարեկամաբար իրարու ձեռք սեղմեցին։
— Ողջո՛յն, օրդի՛դ Եսքիւղարայ, ըսաւ Նոր եկողը, որ Բօարէն էր, մեր գերասան-քերթող-մեքենագետը։
— Գարկնէտ կեցի՛ր, պատասխանեց կամաց մը Ժօզէրէն, — ուրկէ կ'գաւ կոր։
— Բալէ-Բօայեալի մարդ գլուխ 2 ֆրանքի ճաշարանէն։
Ժօզէրէն կասկածոտ այքով մ'անոր նայեցաւ։
— Ինչ արհեստ կ'բանիս կոր հիւսայ, ըսաւ։
— Մերթ մէկ, մերթ ալ ուրիշ արհեստ մը, պատասխանեց Բօարէ, — ես գաղափար մ'ունիմ. . . Բայց ատանկ ակնոցիդ վրայէն մի՛ նայիր ինձի, ըսաւ իր խօսքըն ընդ միջեւով, — հիմայ ամեն մարդ անանկ պիտի կարծէ թէ՛ քննէ փոխառութիւն մ'ընելու համար կը բանակցիմ. . . Մի՛ վախնար, տակաւին սակէ միջեւ տասն և հինգ օրուան ապրուստ ունիմ. . . և այդ տասն և հինգ արու մէջ ալ — բայց ըսածս գաղափար մայք քովդ, Ժօզէրէն — կրնայ ըլլալ որ միլիոններու տեր լինիմ։
— Հո՛ւ հա՛հ. . .